ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ՝ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ «ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ՝ ՄԱՍ II» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 7 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում և 2008 թվականի հուլիսի 7-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը։

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան։

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում և 2008 թվականի հուլիսի 7-ին Երևանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև՝ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների տարեկան ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրի և Ֆինանսավորմանն աջակցելու նպատակով։

2. Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում հավելվածները։

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ստորագրել համաձայնագրի իրականացումն ապահովող պայմանագրեր՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում, ընդ որում, այդ վերջնաժամկետը չի կարող երկարացվել,
- թույլատրել Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների տարեկան ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տարադրամի ներմուծումն ու գնումը, ինչպես նաև մրցույթին մասնակցող բոլոր կապալառուների նկատմամբ առանց խտրականության կիրառել տարադրամի փոխանակման ներքին կանոնները,
- տրամադրել համաֆինանսավորում Եվրոպական համայնքների կողմից չֆինանսավորվող հարկերի, տուրքերի կամ այլ վճարումների համար,

բացառությամբ հատուկ պայմաններով նախատեսված դեպքերի (ներառյալ ԱԱՀ կամ համարժեք հարկեր),

- կիրառել Եվրոպական համայնքների կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի և դրամաշնորհների նկատմամբ ամենանպաստավոր հարկային և մաքսային պայմաններ՝ կիրառելի այլ պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ։

4. Համաձայնագրում ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանված վերջին Կողմի ստորագրման օրը, սակայն Հայաստանի Հանրապետության կողմից համաձայնագիրը ստորագրվել է վերապահումով՝ առ այն, որ Հայաստանի Հանրապետության համար համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վավերացման ներքին ընթացակարգերի ավարտի մասին ծանուցումը Եվրոպական հանձնաժողովի կողմից ստանալու օրը։

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 և 48 հոդվածներին և բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից։

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում և 2008 թվականի հուլիսի 7-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

7 նոյեմբերի 2008 թվականի
ՍԴՈ-778